# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

**« 13 » « նոյեմբերի» 2019թ.**
**ժամը 15:00**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | Բացակայում է |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Ա.Մխիթարյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Գ.Գրիգորյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Մ.Օհանջանյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | Լ.Ջոհրաբյան |

*Ռ.Չոբանյանը բացակայում էր (գործուղում), նիստը նախագահում էր Մ.Այդինյանը:

## 1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով մրցույթի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

---------------------------------------------------------------------------------

(Մ.Այդինյան)

1.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով մրցույթի նիստը կայացել է 2019 թվականի նոյեմբերի 13-ին, ժամը 15:00-ին, շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 514 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. Հանձնաժողովը որոշեց՝

---------------------------------------------------------------------------------

(Մ.Այդինյան)

2.1. Բանակցությունների արդյունքում մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Պի ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ին, երրորդ տեղ՝ «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ին, չորրորդ տեղ՝ «Հայաուդիտ» ՍՊԸ-ին, հինգերորդ տեղ՝ «Գարանտ Աուդիտ» ՍՊԸ-ին:

2.2. Հանձնաժողովի քարտուղարին՝

2.1.1 Ծանուցել «Պի ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ին հրավերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 19-ը ներառյալ, էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին ներկայացնել Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հավելված №3-ով նախատեսված գրությունը, որին անհրաժեշտ է կցել՝

1. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը·
2. իր կողմից հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին՝ համաձայն հավելված № 3.1-ի: Նշված տեղեկանքին կցվում են նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, ինքնակենսագրություն (CV)), աշխատանքային պայմանագրերի և նմանատիպ աշխատանքների կատարումը հավաստող այլ փաստաթղթերի պատճեններ, ինչպես նաև համապատասխան գործատուի մոտ կատարած աշխատանքները հավաստող գործատու(ներ)ի ղեկավարի կողմից ստորագրված երաշխավոր(ներ)ի նամակ(ներ) և ստորագրված գրավոր հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

2.1.2 Հրավերով սահմանված ժամկետում ուղարկել հարցում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ «Պի ԿԱ ԷՖ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

---------------------------------------------------------------------------------

(Մ.Այդինյան)

2.3. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-20/04» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2019 թվականի նոյեմբերի 20-ին, ժամը 16:00-ին, ք.Երևան, Կառավարության 3 շենք, 5-րդ հարկ, Շրջակա միջավայրի նախարարություն, 514 սենյակ հասցեում:

## 4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ________________ | Մ.Այդինյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ________________ | Ա.Մխիթարյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ________________ | Գ.Գրիգորյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ________________ | Մ.Օհանջանյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | ________________ | Լ. Ջոհրաբյան |